ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՅՈՒՆԻՌԵՍՈ» Ապահովագրական
փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերի հիմնադիր ժողովի
22/09/2008թ.-ի թիվ 1 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է
«ՌԵՍՈ» Ապահովագրական
փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
17/07/2020թ.-ի թիվ 35որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_______________________

«ՌԵՍՈ» Ապահովագրական
փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
նախագահ՝

_______________________
Գագիկ Զաքարյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՌԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրությամբ)

Kirill Kruglyak

Подписано цифровой подписью: Kirill Kruglyak
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=RESO INSURANCE CJSC, email=info@reso.am, cn=Kirill Kruglyak
Дата: 2020.07.23 14:20:49 +04'00'

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) ստեղծվել է հիմնադրման միջոցով: Համաձայն Ընկերության բաժնետերերի ընդհանուր արտահերթ ժողովի «08» հունիսի 2009թ. որոշման Ընկերության բաժնետերերն են՝ «Պոլիգրաֆիա» Փակ Բաժնետիրական Ընկերությունը և «Սի Այ էս Իքուիթի Փարթներս Լիմիթեդ» Ընկերությունը: Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնետոմսերի: Ընկերությունը ստեղծված է առանց ժամկետային սահմանափակման:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է ստեղծման (պետական գրանցման) պահից: Ընկերության իրավունակությունը դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք: Ընկերության կնիքը կարող է պարունակել նաև Ընկերության անվանումը կամ ֆիրմային անվանումն օտար լեզուներով, ինչպես նաև իր ապրանքային նշանի պատկերը կամ խորհրդանիշը:

1.4. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանումը պարունակող դրոշմներ, ձևաթղթեր, խորհրդանիշ, ապրանքային (առևտրային) նշան և անհատականացման այլ միջոցներ:

1.5. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

1.6. Ընկերության մասնակցի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորում են Օրենսգրքով, Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայստանանի Հանրապության օրենքով և Կանոնադրությամբ:

1.7. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց կողմից ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության մասնակիցը, որն Ընկերության կանոնադրական կապիտալում իր ավանդն ամբողջությամբ չի ներդրել, համապարտ պատասխանատվություն է կրում Ընկերության պարտավորությունների համար՝ իր ավանդի չվճարված մասի արժեքի սահմաններում:

1.8. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.9. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ **«ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն**
կրճատ՝ **«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ**
ռուսերեն լրիվ՝ **Страховое Закрытое Акционерное Общество “РЕСО”,**
կրճատ՝ **Страховое ЗАО “РЕСО”**
անգլերեն լրիվ՝ “RESO” Insurance Closed Joint Stock Company
կրճատ՝ “RESO” Insurance CJSC

1.10. Ընկերության գտնվելու վայրն (փոստային հասցեն) է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Կոմիտաս պողոտա, շենք 62, տարածք 93-93/1:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակը Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված գործառնությունների իրականացման արդյունքում շահույթի ստացումն է:
2.2. Ընկերության գործունեության առարկան է ապահովագրությունը՝ հարաբերություն, որը հաստատվում է Ընկերության և Ապահովադրի (Ապահովագրության պայմանագիր կնքող անձի) միջև և նպատակ ունի ապահովել Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված և ապահովագրության պայմանագրով թվարկված ապահովագրական պատահարների տեղի ունենալու հետ կապված ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ պայմանագրով նախատեսված այլ անձանց (Շահառուների) անձնական և գույքային շահերի պաշտպանությունը:
2.3. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը հետևյալ ապահովագրության դասերով ոչ կյանքի ապահովագրության տեսակի իրականացումն է՝
2.3.1. Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)՝
ա) ամրագրված դրամական հատուցմամբ,
բ) հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,
գ) սույն կետի ա) և բ) ենթակետերը միասին,
դ) ուղևորների վնասվածքների:
2.3.2. Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային), որը ծածկում է այն վնասները կամ կորուստները, որոնք պատճառվել են՝
ա) ցամաքային ավտոտրանսպորտին,
բ) ցամաքային այլ տրանսպորտին:
2.3.3. Օդանավերի ապահովագրություն, որը ծածկում է օդանավերին պատճառված վնասները և կորուստները,
2.3.4. Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք պատճառվել են փոխադրման գործընթացի մեջ գտնվող գույքին (բեռներին)՝ անկախ փոխադրամիջոցի տեսակից:
2.3.5. Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք ներառված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-7-րդ կետերում սահմանված դասերում) հետևյալ պատահարների արդյունքում՝
ա) հրդեհ,
բ) պայթյուն,
գ) երկրաշարժ,
դ) փոթորիկ,
ե) միջուկային վարակ, վնասվածք և այլն,
զ) հողի սողանք:
2.3.6. Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն, որը ծածկում է այն վնասները և կորուստները, որոնք հասցվել են գույքին (բացառությամբ գույքի այն տեսակների, որոնք ներառված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ից 7-րդ կետերում սահմանված դասերում) հետևյալ պատահարների արդյունքում և նշված չեն Կանոնադրության 2.3.4 ենթակետում սահմանված դասում՝
ա) կարկտահարություն,
բ) ցրտահարություն,
գ) երաշտ,

դ) համաճարակ, կարանտին հիվանդություն,
ե) սելավ, ջրհեղեղ,
զ) բնական և տեխնածին բնույթի այլ աղետներ, վթարներ ու պատահարներ, ներառյալ գույքի հափշտակությունը:
2.3.7. առողջության ապահովագրություն՝
ա) ամրագրված դրամական հատուցմամբ,
բ) հատուցմամբ՝ կախված պատահարի բնույթից,
գ) սույն կետի ա) և բ) ենթակետերը միասին.
2.3.8. ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:
2.3.9. օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
2.3.10. աջակցության ապահովագրություն, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:
2.3.11. ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն:
2.3.12. ֆինանսական վնասների ապահովագրություն, որոնք առաջանում են՝
ա. աշխատանքային ռիսկերից,
բ. եկամուտների թերստացումից (ընդհանուր),
գ. վատ եղանակից,
դ. բաց թողնված օգուտից,
ե. շարունակական (ընթացիկ) ընդհանուր ծախսերից,
զ. չնախատեսված առեւտրային ծախսերից,
է. շուկայական արժեքի կորստից,
ը. վարձավճարի կամ այլ եկամտի կորստից,
թ. անուղղակի առեւտրային կորուստներից, որոնք նշված չեն սույն կետի «ա»-«ը» ենթակետերում,
ժ. այլ ֆինանսական ոչ առեւտրային կորուստներից,
ժա. ֆինանսական կորուստների այլ ձեւերից.
2.4. Ընկերությունն իր կողմից իրականացվող հիմնական ապահովագրական գործունեությունից բացի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ապահովագրական գործունեությունից բխող կամ դրա հետ ուղղակիորեն կապված հետևյալ գործառնությունները՝
ա) ներդնել և կառավարել Ընկերության միջոցները «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, օրենսդրությամբ սահմանված լիազոր պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից ընդունած նորմատիվ իրավական ակտերով թույլատրված ակտիվներում և սահմանաչափերով,
բ) իրականացնել Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարում, այդ թվում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, լիազոր մարմնի կողմից ընդունած նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության կողմից սահմանած կարգով կատարել ստանձնած ռիսկերի կամ դրանց մի մասի վերաապահովագրություն ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական ապահովագրական (կամ վերաապահովագրական) ընկերություններում,
գ) իրականացնել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործառնություններ, եթե դրանք օգտագործվում են ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ռիսկերը ծածկելու համար, կապված փոխարժեքի, տոկոսադրույքների փոփոխությունից բխող և այլ ռիսկերի հետ,
դ) գնահատել ապահովագրական ռիսկերը,
ե) ստանձնել և օտարել սուբրոգացիայի արդյունքում Ընկերության սեփականությանն անցած գույքը և այլ իրավունքները,
զ) բացահայտել ապահովագրական պատահարի առաջացման պայմանները և պատճառները,
է) գնահատել ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների, ապահովագրական հատուցման և ապահովագրության պայմանագրից բխող այլ վճարումների չափը,
ը) գնահատել ապահովագրության օբյեկտի արժեքը,

թ) իրականացնել միջոցառումներ ուղղված ապահովագրական պատահարների կանխարգելմանը, դրանց արդյունքում հնարավոր վնասների նվազեցմանը, այդ միջոցառումները ֆինանսավորելու նպատակով ձևավորել միջոցներ,
ժ) ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ,
ժա) Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ Ընկերության անունից և հաշվին գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել բաժնետոմսեր, պարտատոմսեր կամ ներդրումային այլ արժեթղթեր,
ժբ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վերաբերյալ տեղեկատվական համակարգ,
ժգ) լիազոր մարմնի թույլտվությամբ, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ ուղղակիորեն կապված են ապահովագրական գործունեության կամ Կանոնադրությամբ նախատեսված գործառնությունների հետ և չեն վտանգում ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը,
ժդ) կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է Ընկերությանը Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և լիազոր մարմնի կողմից ընդունած նորմատիվ իրավական ակտերով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

## 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը կազմակերպաիրավական ձևը փակ բաժնետիրական ընկերություն է: Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3.2. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և իրավունք ունի Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ (դրամով, տարադրամով) Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:
3.3. Ընկերությունն Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր և կախյալ) հիմնադիր (մասնակից, բաժնետեր):
**3.4. <u>Ընկերությունն իրավունք ունի՝</u>**
3.4.1. օրենքով կամ այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
3.4.2. ինքնուրույն ձևավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, իրավական ակտերով սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
3.4.3. օտարել, ֆինանսական վարձակալության տալ, փոխանակել, իրավական ակտերով չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

3.4.4. տարեկան ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝ առաջացած շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
3.4.5. օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ անձանց համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից,
3.4.6. իրականացնել ներդրումներ այլ պետություններում՝ վերջիններիս օրենսդրության համաձայն և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով թույլատրված դեպքերում:

**3.5. Ընկերությունը պարտավոր է՝**

3.5.1. օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ ներկայացնել լիազոր պետական կառավարման մարմիններ, սահմանված կարգով հրապարակել ֆինանսական հաշվետվություններ,
3.5.2. իր հաճախորդների հետ հարաբերություններում պահպանել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և Ընկերության կողմից հաստատված ապահովագրության կանոններով սահմանված պահանջները,
3.5.3. աշխատանքային պայմանագրեր (համաձայնագրեր) կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
3.5.4. պատասխանատվություն կրել և հատուցել իր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքները խախտելու համար իր կողմից պատճառված վնասը,
3.5.5. ապահովել Ընկերության փաստաթղթերի (Կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթերի, Ընկերության հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
3.5.6. կրել իրավական ակտերով և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերությունը կարող է Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծել մասնաճյուղ և ներկայացուցչություն:
4.2. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն ու դրանց գործունեության դադարեցումն իրականացվում է Ընկերության Խորհրդի կողմից ընդունված որոշման հիման վրա՝ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
4.3. Ընկերության մասնաճյուղը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից հաստատած կանոնադրության հիման վրա և Ընկերության կողմից տրված լիազորությունների շրջանակներում: Մասնաճյուղը Ընկերության անունից կարող է ապահովագրական գործունեություն իրականացնել միայն ապահովագրության այն դասերով, որի համար լիցենզիա է ստացել Ընկերությունը և դրա իրականացման համար լիազորել նաև Ընկերության մասնաճյուղին:
4.4. Ընկերության ներկայացուցչությունը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր և իրականացնում համանման այլ գործառույթներ:
4.5. Ընկերությունը կարող է վարել իր մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցամատյան, որտեղ գրառում է կատարվում Ընկերության կողմից ստեղծված և լիազոր մարմնի կողմից գրանցված մասնաճյուղի և ներկայացուցչության, ինչպես նաև լուծարված մասնաճյուղի և ներկայացուցչության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները):

4.6. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում են ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում:
4.7. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ղեկավարները նշանակվում են Ընկերության Գործադիր տնօրենի կողմից՝ Ընկերության Խորհրդի համաձայնությամբ:
4.8. Ընկերությունը պատասխանատվություն է կրում մասնաճյուղի և ներկայացուցչության պարտավորությունների համար:

## 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Ընկերության բաժնետոմս ձեռք բերող անձը բաժնետիրոջ իրավունքներ է ձեռք բերում բաժնետերերի ռեեստրում համապատասխան գրառում կատարելու պահից:

Ընկերության բաժնետերերի ռեեստրը վարում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով Ընկերության հետ փոխկապակցված անձ չհամարվող և նման գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող մասնագիտացված կազմակերպությունը՝ որին Ընկերությունը սահմանված կարգով հանձնարարել է ռեեստրի վարումը:

Բաժնետերերը կարող են փոփոխվել Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ նոր բաժնետիրոջ (բաժնետերերի) ընդունման, բաժնետիրոջ (բաժնետերերի) դուրս գալու, հեռացման, ամբողջ բաժնետոմսերի օտարման միջոցով, բաժնետիրոջ ամբողջ բաժնետոմսերի վրա բռնագանձում տարածելու և իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:

Ընկերությունը՝ որպես մեկ հիմնադիր (բաժնետեր) չի կարող հիմնադրել կամ ունենալ այլ տնտեսական ընկերություն, որը բաղկացած է մեկ անձից:
5.2. Ընկերությունը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չի կարող գերազանցել Ընկերության Կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:
5.3. Ընկերության բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Բաժնետերերի ժողովի կողմից որոշվող շուկայական արժեքը:
5.4. Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց որպես վճարման միջոց կարող են օգտագործվել հայկական դրամը, թողարկման որոշմամբ նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ վճարամիջոցներ: Թողարկվող բաժնետոմսերը կարող են ձեռք բերվել նաև դրանք բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերով փոխարկելու միջոցով:
5.5. Թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարում կարող է կատարվել վճարման միանվագ կամ տարաժամկետ (ոչ ավել 6 ամսից) եղանակով, ըստ բաժնետոմսերի թողարկման որոշման: Ընդ որում, լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ պետք է վճարվի դրանց անվանական արժեքի առնվազն 25 %-ը:
5.6. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն հասարակ (սովորական) բաժնետոմսի գինը լրիվ վճարած բաժնետերերը:
5.7. Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի իրավունքները և պարտավորությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:
**5.8. <u>Ընկերության բաժնետերն իրավունք ունի՝</u>**
5.8.1. Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը,
5.8.2. տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության տնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ,
5.8.3. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (դիվիդենտի) համապատասխան մասը,

5.8.4. հանդես գալ առաջարկություններով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում,
5.8.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով,
5.8.6. Ընկերության լուծարվելու դեպքում՝ Կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով Ընկերության պարտատերերի նկատմամբ առկա պարտավորությունների մարումից հետո ստանալ գույքի մնացած մասի կամ դրա արժեքի իր մասնաբաժինը,
5.8.7. ցանկացած ժամանակ դուրս գալ Ընկերությունից (անկախ մյուս (բաժնետերերի) համաձայնությունից),
5.8.8. հայցով դիմել դատարան՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և օրենքին կամ այլ իրավական ակտին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
5.8.9. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր,
5.8.10. օգտվել Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:
5.8.11. Ընկերության բաժնետերերն Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը (դրանց մասը) վաճառելու կամ Օրենքով կամ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ձևով այլ անձանց օտարելու իրավունք: Ընդ որում, Ընկերության մյուս բաժնետերերն իրենց բաժնետոմսերին համամասնորեն օգտվում են բաժնետիրոջ բաժնետոմսերը (դրա մասը) գնելու (ձեռք բերելու) նախապատվության իրավունքից այն գնով, որն առաջարկվել է երրորդ անձին (անձանց): Իր բաժնետոմսերը երրորդ անձին օտարելու ցանկություն ունեցող բաժնետերը պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Ընկերությանը՝ նշելով օտարվող բաժնետոմսերի գինը և վաճառքի (օտարման) մյուս պայմանները: Ընկերությունը, բաժնետոմսերի օտարման մասին բաժնետիրոջ գրավոր դիմումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է Ընկերության մյուս բաժնետերերին, այդ մասին գրությունը վերջիններիս հանձնելով առձեռն կամ ուղարկելով պատվիրված նամակի, հեռագրային, ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով: Այն դեպքում, երբ Ընկերության բաժնետերերը տեղեկացվելու օրվանից երեսուն օրացուցային օրվա ընթացքում չեն օգտվում բաժնետոմսերը գնելու (ձեռք բերելու) իրենց նախապատվության իրավունքից, բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք է ձեռք բերում Ընկերությունը: Այդ դեպքում Ընկերությունը, մեկամսյա ժամկետում, Ընդհանուր ժողովի ձայների առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ, որոշում է ընդունում օգտագործել օտարվող բաժնետոմսերը ձեռք բերելու (հետգնելու) իր նախապատվության իրավունքը կամ հրաժարվել դրա հետգնման նախապատվության իր իրավունքից: Օտարվող բաժնետոմսերի ձեռքբերման Ընկերության նախապատվության իրավունքի ծագման պահից մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի կողմից որոշում չընդունվելու կամ Ընկերության նախապատվության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ որոշում ընդունվելու դեպքում, բաժնետերը իր բաժնետոմսերը կարող է օտարել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկել էր Ընկերության բաժնետերերին կամ Ընկերությանը: Բաժնետոմսերը երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջ պահանջով ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, սահմանված կարգով բաժնետիրոջը վճարելով բաժնետոմսերի (դրա մասի) արժեքը: Ընկերության բաժնետիրոջը պատկանող բաժնետոմսերն Ընկերությանն անցնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, Ընկերության ընդհանուր ժողովի միաձայն որոշմամբ, այն պետք է բաշխվի Ընկերության բոլոր բաժնետերերի միջև՝ նրանց բաժնետոմսերին համապատասխան, կամ Ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, կամ երրորդ անձանց, և ամբողջությամբ վճարվի: Բաժնետոմսերի չբաշխված մասը պետք է մարվի՝ Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով: Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնետոմսերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Ընկերության բոլոր բաժնետերերը միաժամանակ: Ընկերության բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում

հաշվի է առնվում Ընկերության զուտ ակտիվների (Ընկերության սեփական կապիտալի) մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնետոմսերի արժեքը (կամ ընկերության զուտ ակտիվների մեծությունը) սահմանվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

5.8.12. Եթե Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու համար անհրաժեշտ է լիազոր մարմնի համաձայնությունը, ապա մասնակցություն կամ նշանակալից մասնակցություն ձեռք բերելու հավակնություն ունեցող անձը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ձեռք բերել այդ համաձայնությունը՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր:

5.8.13. Եթե Ընկերության կողմից բաժնետոմսերի հետգնման համար անհրաժեշտ է լիազոր մարմնի համաձայնությունը, ապա Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ձեռք բերել այդ համաձայնությունը՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր:

**5.9. Ընկերության բաժնետերը պարտավոր է՝**

5.9.1. Կանոնադրությամբ կամ Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ,

5.9.2. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ՝ բացառությամբ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերից,

5.9.3. պատշաճ կերպով կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

5.9.4. պահպանել Կանոնադրության դրույթները:

5.9.5. Ընկերության բաժնետերը, որը գումարային առումով տնօրինում է Ընկերության բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին (այսուհետ՝ նաև նշանակալից մասնակից), իրավունք ունի դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե հիմնավորվում է, որ վերջինս իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը: Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնետոմսն անցնում է Ընկերության տրամադրության տակ: Ընկերությունը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնետոմսի արժեքը Օրենքով և Կանոնադրության 5.3 կետով սահմանված կարգով:

5.9.6. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնետոմսը նրա դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է Ընկերությանը: Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով՝

5.9.6.1. վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասի չափով) արժեքը,

5.9.6.2. բաժնետոմսերի կամ գույքի արժեքը որոշվում է նրա դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,

5.9.7. Ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետիրոջը, վերջինիս համաձայնությամբ, կարող է տրվել նրա բաժնետոմսերի արժեքին համապատասխան գույք,

5.10. Բաժնետերը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը:

5.11. Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջը վճարել բաժնետոմսերի արժեքը՝ Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից հետո 6 ամսվա ընթացքում:

## 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ընկերությունը պարտավոր է իր ինտերնետային կայքում և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ առաջարկվող ապահովագրական ծառայությունների վերաբերյալ՝ ըստ առաջարկվող ապահովագրության

դասերի և ենթադասերի՝ այդ թվում ապահովագրության պայմանները և առաջարկվող ապահովագրական սակագները:
6.2. Ընկերությունն իրավունք ունի իր ինտերնետային կայքում և ցանկացած այլ միջոցներով հրապարակել Ընկերության վերաբերյալ տեղեկատվություն՝ բացառությամբ ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների:
6.3. Ընկերությունը պարտավոր է Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հրապարակել Ընկերության, Ընկերության բաժնետերերի, Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի, տնօրենի տեղակալի և այլ ղեկավարների վերաբերյալ պահանջվող տեղեկությունները՝ բացառությամբ ապահովագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների:
6.4. Ընկերությունը պարտավոր է իր մշտապես գործող ինտերնետային կայքում հրապարակել նաև Ընկերությունում մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն՝ նշելով նրանց անունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը, նախորդ տարվա ընթացքում նրանց և նրանց հետ փոխկապակցված անձանց հետ ապահովագրական ընկերության կնքած ապահովագրական պայմանագրերի վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը և ապահովագրական սակագինը:

## 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

7.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝
7.1.1. այն գույքի՝ ներառյալ դրամական միջոցների, որոնք Ընկերության բաժնետերերը, որպես Ընկերությունում մասնակցության դիմաց վճարումներ կամ այլ պայմանավորվածությամբ նրան են հանձնել,
7.1.2. տնտեսական գործունեության հետևանքով ձեռք բերած գույքի,
7.1.3. ստացված եկամուտների,
7.1.4. չբաշխված շահույթի,
7.1.5. իրավական ակտերով չարգելված ձևերով ձեռք բերված գույքի:
7.2. Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք իրավական ակտերին համապատասխան չեն կարող պատկանել Ընկերությանը:
7.3. Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են օրենքով և այլ իրավական ակտերով:

## 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

8.1. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը, որը չի կարող պակաս լինել նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափից:
8.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2 830 000 000 (երկու միլիարդ ութ հարյուր երեսուն միլիոն) ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 2 244 (երկու հազար երկու հարյուր քառասունչորս) սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 1 000 000 /Մեկ միլիոն/ ՀՀ դրամ անվանական արժեքով և 586 (Հինգ հարյուր ութսունվեց) հատ հաստատուն շահութաբաժնով՝ 15 (տասնհինգ) % տարեկան եկամտաբերությամբ արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրը 1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ անվանական արժեքով:
8.3. Ընկերության բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխված և վճարված են, պատկանում են Ընկերության բաժնետերերին:
8.4. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետերերի կողմից կատարված լրացուցիչ ներդրումները չեն ազդում Ընկերության բաժնետիրոջ ունեցած բաժնեմասի վրա, եթե սահմանված կարգով

համապատասխան փոփոխություններ չեն կատարվել Կանոնադրության մեջ կամ փոփոխությունները իրականացվել են առանց լիազոր մարմնի նախնական համաձայնության (այն դեպքում երբ իրավական ակտերով սահմանված կարգով այդ մասնակցության ձեռք բերման համար անհրաժեշտ է լիազոր մարմնի նախնական համաձայնությունը):

8.5. Ընկերության բաժնետերը կարող է իր բաժնետոմսերը օտարել միայն Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.6. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնետոմսերն անցնում են Ընկերության բաժնետեր քաղաքացու ժառանգներին կամ բաժնետեր իրավաբանական անձի իրավահաջորդներին միայն Ընկերության մյուս բաժնետերերի համաձայնությամբ: Ընդ որում, բաժնենտոմս իրավահաջորդության կարգով անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի (իրավահաջորդի) կողմից բաժնետոմսերից հրաժարվելու դեպքում դրա արժեքի վճարումը կատարվում է Կանոնադրության 5.3 կետով սահմանված կարգով:

8.7. Ընկերությունը կարող է Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին Ընկերության որոշումն ուժի մեջ է մտնում լիազոր մարմնում համապատասխան փոփոխությունները պետական գրանցում ստանալու պահից:

8.8. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո:

8.9. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել`

8.9.1. Ընկերության չբաշխված շահույթը կամ դրա մի մասը կանոնադրական կապիտալ փոխանցելու հաշվին,

8.9.2. Ընկերության բաժնետերերի կողմից կատարվող դրամական միջոցների լրացուցիչ ներդրման (ավանդի) հաշվին,

8.9.3. երրորդ անձանց կողմից կատարվող դրամական միջոցների ներդրումների հաշվին:

8.10. Ընկերության կանոնադրական կապիտալը համալրելու կամ բաժնետոմս ձեռք բերելու նպատակով վճարումը պետք է իրականացվի բացառապես փողով` Հայաստանի Հանրապետության դրամով:

8.11. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը Ընկերության չբաշխված շահույթի կամ դրա մի մասի կանոնադրական կապիտալ փոխանցելու հաշվին իրականացվում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ` Ընկերության բաժնետերերի ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդով:

8.12. Ընկերության բաժնետերերի կողմից կատարվող լրացուցիչ դրամական միջոցների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումն իրականացվում է Ընկերության ընդհանուր ժողովի կողմից` բաժնետերերի ձայների առնվազն երկու երրորդով: Նշված որոշմամբ որոշվում է լրացուցիչ ներդրումների ընդհանուր գումարային արժեքը, լրացուցիչ ավանդի և այն գումարի` բոլոր բաժնետերերի համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո վեց ամսվա ընթացքում: Ընկերության բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ:

8.13. Արգելվում է Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը` դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ եղանակով` բացառությամբ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

8.14. Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության բաժնետիրոջ բաժնետոմսերի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

8.15. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 %-ի չափով: Այս հիմնադրամի ձևավորումն իրականացվում է Ընկերության տարեկան զուտ շահույթից կատարվող մասհանումների միջոցով՝ մինչև կանոնադրական կապիտալի 15% չափին հասնելը: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը չպետք է պակաս լինի Ընկերության տարեկան զուտ շահույթի 5%-ից: Պահուստային հիմնադրամում ձևավորված միջոցների օգտագործման կարգը որոշվում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից:
8.16. Ընկերությունում կարող են ստեղծվել օրենքով, իրավական ակտերով և Կանոնադրությամբ չարգելված այլ հիմնադրամներ:

## 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԾԱԾԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ընկերության գործունեության տարեկան արդյունքներով ստացված համախառն եկամտի և իրավական ակտերով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:
9.2. Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված զուտ շահույթը կարող է բաշխվել Ընկերության բաժնետերերի միջև կամ որպես չբաշխված շահույթ տեղափոխվել հաջորդ ֆինանսական տարի, եթե Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահուստները ստեղծված և ամբողջությամբ համալրված են:
9.3. Արգելվում է շահութաբաժինների վճարումն Ընկերության կանոնադրական կապիտալի հաշվին:
9.4. Ընկերությունն իրավունք չունի վճարել տարեկան շահութաբաժիններ՝
9.4.1. եթե շահութաբաժինների վճարման պահին կամ վճարման հետևանքով Ընկերությունը խախտել է կամ կարող է խախտել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվներից թեկուզև մեկը,
9.4.2. եթե շահութաբաժինների վճարման պահին Ընկերության կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Ընկերությունում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին,
9.4.3. Օրենքով կամ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:
9.5. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին միջանկյալ՝ եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան, շահութաբաժինների բաշխման և վճարման մասին՝ բացառությամբ Կանոնադրությամբ և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի և ժամկետների մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը՝ Ընկերության Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի և ժամկետների մասին որոշումն ընդունվում է Ընկերության Խորհրդի կողմից: Ընկերության Խորհրդի կողմից ընդունված միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը չի կարող ավելի շուտ լինել, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
9.6. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Ընկերության Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝
9.6.1. միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Ընկերության մասնակիցների ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,

9.6.2. տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Ընկերության մասնակիցների ռեեստրում՝ Ընկերության մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
9.7. Ընդհանուր ժողովն իրավունք ունի շահութաբաժիններ չվճարելու որոշում ընդունել:
9.8. Ընկերության կորուստները կարող են ծածկվել Ընկերությունում Կանոնադրության համաձայն ստեղծված հիմնադրամների (այդ թվում պահուստային), ինչպես նաև Ընկերության չբաշխված շահույթի հաշվին՝ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոնադրությամբ սահմանված կարգով:

## 10. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ: ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Ընկերության կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման և օտարման հետ կապված ցանկացած գործարք, անկախ դրանց գնից, կնքվում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշման հիման վրա՝ Օրենքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան:
10.2. Ընկերության կողմից հիմնական միջոցների ձեռքբերման կամ ձեռքբերման հնարավորության հետ կապված այն գործարքները, որոնց գինը (արժեքը) գերազանցում է Ընկերության ակտիվների 50 տոկոսը, կնքվում են բացառապես Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից ընդունած որոշման հիման վրա:
10.3. Ընկերության կողմից հիմնական միջոցների օտարման կամ օտարման հնարավորության հետ կապված ցանկացած գործարք, որի գինը (արժեքը) գերազանցում է Ընկերության կանոնադրական ակտիվների 50 տոկոսը, կնքվում է բացառապես Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից ընդունած որոշման հիման վրա:
10.4. Ընկերության կողմից հիմնական միջոցների ձեռքբերման կամ ձեռքբերման հնարավորության հետ կապված այն գործարքները, որոնք չեն տեղավորվում Ընկերության տվյալ ժամանակահատվածի համար հաստատված ծախսերի նախահաշվի շրջանակներում, կնքվում են Ընկերության Խորհրդի որոշման հիման վրա՝ բացառությամբ Կանոնադրության 10.2 կետում թվարկված դեպքերի: Ընկերության կողմից հիմնական միջոցների օտարման կամ օտարման հնարավորության հետ կապված ցանկացած գործարք կնքվում է Ընկերության Խորհրդի որոշման հիման վրա՝ բացառությամբ Կանոնադրության 10.2 կետում թվարկված դեպքերի:
10.5. Գույքի, այդ թվում՝ Օրենքով սահմանված խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի, շուկայական արժեքը որոշվում է Ընկերության Խորհրդի որոշմամբ, բացառությամբ իրավական ակտերով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:
10.6. Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է Ընկերության Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:
10.7. Գույքի (բացառությամբ Ընկերության կողմից ապահովագրված կամ ապահովագրվող գույքի, ինչպես նաև գույքին պատճառված վնասների) շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Ընկերությունը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:
10.8. Ընկերության գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում Խորհրդի անդամը, Ընկերության կառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձը կամ Ընկերության այն բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝
10.8.1. հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին, որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

10.8.2. տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.
10.8.3. պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում: Փոխկապակցված են համարվում նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ապահովագրական գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով այդպիսիք համարվող անձինք:
10.9. Շահագրգիռ անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել Ընկերության Խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտ իրականացնող անձին՝
10.9.1. այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 20 և ավելի տոկոսին.
10.9.2. այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.
10.9.3. կնքված կամ կնքվելիք իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:
10.10. Ընկերության գործարքներում շահագրգռվածության առկայության դեպքում գործարքները կնքվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգին, պայմաններին և կանոններին համապատասխան:

## 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

11.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝
- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Ընկերության Խորհուրդը,
- Ընկերության Գործադիր տնօրենը:

## 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

12.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընդհանուր ժողովը կարող է լինել տարեկան և արտահերթ: Ընդհանուր ժողովներն գումարվում են բաժնետերերի համատեղ նիստի միջոցով: Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ բացառությամբ Կանոնադրության 12.3 կետի բ), գ) և է) ենթակետերում նշված հարցերի: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված Ընդհանուր ժողովի որոշումներն օրինական ուժ ունեն, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով քվեարկությունը կատարվում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով Ընդհանուր ժողով գումարելու դեպքում քվեաթերթիկները տրամադրվում են Ընկերության բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 15 օր առաջ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով Ընդհանուր ժողովի գումարման դեպքում տրամադրված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվին նախորդող աշխատանքային օրը:
12.2. Ընկերության բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Ընկերության բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Ընկերության բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:
12.3. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխումը,
բ) Ընկերության վերակազմակերպումը,
գ) Ընկերության լուծարումը,
դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
ե) Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
զ) Ընկերության Խորհրդի ներկայացմամբ՝ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
է) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
ը) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
թ) հաշվիչ հանձնաժողովի ստեղծումը,
ժ) Ընկերության Խորհրդի անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը,
ժա) իրավական ակտերով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
ժբ) դուստր կամ կախյալ Ընկերությունների ստեղծումը,
ժգ) դուստր կամ կախյալ Ընկերություններին մասնակցությունը,
ժդ) իրավաբանական անձանց միությունների հիմնադիր հանդես գալը,
ժե) իրավաբանական անձանց միություններին մասնակցությունը,
ժզ) Կանոնադրության 10-րդ բաժնով նախատեսված որոշումների ընդունումը,
ժէ) Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ հարցերով որոշումների ընդունումը:
ժը)Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժինների բացառապես ավելացնելու միջոցով չափի փոփոխումը հաշվետու ժամանակահատվածի համար:
12.4. Կանոնադրության 12.3 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության Խորհրդին, ինչպես նաև Ընկերության Գործադիր տնօրենին, նրա տեղակալներին, գլխավոր հաշվապահին կամ այլ անձանց:
12.5. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ընդհանուր ժողովի բաժնետերերը կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Այդպիսի նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
12.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
12.6.1. Ընկերության բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերին համապատասխան ձայների քանակով,
12.6.2. Ընկերության բաժնետեր չհանդիսացող Ընկերության Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
12.6.3. Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝ որպես դիտորդներ,
12.6.4. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),
12.6.5. Լիազոր մարմնի (ՀՀ ԿԲ) կողմից լիազորված անձինք,
12.6.6. Ընկերության ղեկավարները, որպես Ընդհանուր ժողովի օրակարգում ներառված հարցերով զեկուցողներ:

12.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմվում է Ընկերության Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա:
12.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:
12.9. Այն դեպքում, երբ Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 35 օր շուտ:
12.10. Ընդհանուր ժողովի անցկացման մասին «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնին ծանուցում են դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:
12.11. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի Ընկերության յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Ընկերության կանոնադրական կապիտալում նրան պատկանող մասնակցության չափի մասին:
12.12. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը պետք է ժողովի անցկացումից առնվազն 10 օր առաջ տրամադրվի Ընկերության այն մասնակիցներին, որոնք գրանցված են Ընկերության մասնակիցների ռեեստրում:
12.13. Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:
12.14. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Ընկերության մասնակիցների խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:
12.15. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետոմսերի 50-ից ավել տոկոսին տիրապետող Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները): Եթե Ընդհանուր ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի գրանցում: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում և հաստատված օրակարգի փոփոխություն չի կատարվում: Չկայացած Ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետոմսերի գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները):
12.16. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովում քվեարկությունն իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով՝ բացառությամբ Ընկերության Խորհրդի անդամների ընտրության, ինչպես նաև Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերի:
12.17. Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում:
12.18. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի (նրանց ներկայացուցիչների) ձայների պարզ մեծամասնությամբ՝ բացառությամբ Կանոնադրության 12.3-րդ կետի ա), բ) և գ) ենթակետերով սահմանված դեպքերի, որոնց հետ կապված Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի (նրանց ներկայացուցիչների) ձայների առնվազն 3/4-ով:

12.19. Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները ներկայացվում են Ընկերության բաժնետերերին պատվիրված նամակով կամ առձեռն հանձնելու միջոցով՝ որոշման ընդունման օրվանից հետո 45 օրվա ընթացքում:

12.20. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, Ընդհանուր ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը: Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում կազմված արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

## 13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

13.1. Ընկերության խորհուրդն (այսուհետ՝ Խորհուրդ) իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում:

13.2. Խորհուրդը կազմված է 6 անդամից:

13.3. Խորհրդի անդամներն ընտրվում են Ընկերության բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովում՝ Ընկերության ներկա բաժնետերերի կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովում Ընկերության ներկա մասնակիցների կողմից՝ Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ սահմանված կարգով:

13.4. Ընդհանուր ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ Խորհրդի ձևավորման դեպքի):

13.5. Ընկերության այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին (հանդիսանում են նշանակալից մասնակից), իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

13.6. Ընկերության այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում:

13.7. Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Ընկերության մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ Ընկերության Ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում: Նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմանները ու տեղեկությունները՝

13.7.1. Ընկերության միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի քանակը,

13.7.2. միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները,

13.7.3. Պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ,

13.7.4. միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

13.8. Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

13.9. Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում: Սույն կետի կիրառման առումով Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել Կանոնադրության 13.7.-րդ կետում նշված պայմանագիրը: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում Կանոնադրության 13.7.-րդ ենթակետում նշված պայմանագիրը կնքած Ընկերության մասնակիցները: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրության, առաջադրման և Խորհրդում ընդգրկման կարգը սահմանվում է Կանոնադրությամբ: Ընդ որում, Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պահանջվող տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

13.10. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և Ընկերության գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

13.11.Ընկերությունը պարտավոր է Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափերով և Խորհրդի սահմանած կարգով և պայմաններով վարձատրել կամ փոխհատուցել Խորհրդի անդամներին՝ նրանց կատարած աշխատանքի կամ պաշտոնավարման համար:

13.12.Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

13.13. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից՝ Խորհրդի անդամների կազմից: Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,

գ) կազմակերպում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,

ե) ստորագրում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը (կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն),

զ) Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի, ինչպես նաև Ընկերության Խորհրդի կողմից նշանակվող Ընկերության այլ ղեկավարների հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր,

է) Խորհրդի անդամների, Գործադիր տնօրենի, ինչպես նաև Ընկերության Խորհրդի կողմից նշանակվող Ընկերության այլ ղեկավարների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված որպես գործատուի ներկայացուցիչ,

ը) Ընկերության անունից կնքում է աուդիտորական ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը: Խորհրդի նախագահը կարող է ունենալ տեղակալ, որն ընտրվում է Խորհրդի կողմից, Խորհրդի անդամների կազմից: Խորհրդի նախագահի տեղակալն իրականացնում է Խորհրդի նախագահի պարտականությունները վերջինիս բացակայության ողջ ժամանակահատվածի ընթացքում: Խորհրդի նախագահը կարող է ունենալ իր աշխատակազմը՝ համապատասխան աշխատատեղերով: Խորհրդի նախագահի աշխատակազմի աշխատանքի վարձատրությունը կատարվում է Ընկերության միջոցների հաշվին:

թ) Խորհրդի նախագահի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահի տեղակալը, իսկ Խորհրդի նախագահի տեղակալ չլինելու դեպքում Խորհրդի կողմից լիազորած Խորհրդի անդամը:

13.14. **Խորհրդի իրավասությունները են՝**

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերի հաստատումը,

բ) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Ընկերության գործադիր մարմնի անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Ընկերության ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի և անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե) Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

զ) Ընկերության կազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը,

է) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Ընկերության այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Ընկերության մասնակիցների ռեեստրում՝ Ընկերության տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

ը) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,

թ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին Ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը,

ժ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժա) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժբ) Ընկերության կողմից ապահովագրական գործունեության իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի, այդ թվում ապահովագրության կանոնների և պայմանների ընդունումը,

ժգ) Ընկերության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Ընկերության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,

ժդ) Կանոնադրության 12.3.-րդ կետի «բ», «ժ», «ժբ»-ից «ժե» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումն Ընդհանուր ժողովի քննարկմանը,

ժե) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժզ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

ժէ) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման և դրանց գործունեության դադարեցման մասին որոշման ընդունումը,

ժը) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ներքին իրավական ակտերի սահմանումը,

ժթ) լիազոր մարմնի հետ իրավական ակտերով նախատեսված տնտեսական նորմատիվների խախտումների վերացման հետ կապված պայմանագրերի կնքումը,

ի) լիազոր մարմնի կողմից Ընկերությանը տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ որոշումների ընդունումը,

իա) Կանոնադրության 10-րդ բաժնով Ընկերության Խորհրդին վերապահված գործարքների, ինչպես նաև Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործարքների կնքման հետ կապված որոշումների ընդունումը,
իբ) Ընկերության կողմից կնքվելիք վերաապահովագրության գլխավոր (ֆակուլտատիվ կամ օբլիգատոր) պայմանագրերին հավանության արժանացումը,
իգ) Ընկերության վերաապահովագրության տարեկան ծրագրի (քաղաքականության) հաստատումը,
իդ) Ընկերության կողմից կիրառվող ապահովագրական սակագների միջակայքերի (նվազագույն և առավելագույն չափերի) հաստատումը,
իե) ցանկացած տեսակի և չափով փոխառությունների Ընկերության կողմից տրամադրման հետ կապված որոշումների ընդունումը,
իզ) Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
13.15. Կանոնադրության 13.14-րդ կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին կամ այլ անձանց:
13.16. Առնվազն տարին մեկ անգամ Խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունն ու ներքին իրավական այլ ակտերը:
13.17. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը պետք է քննարկի Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, Գործադիր տնօրենի (տնօրինության) և գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի (ակտուարային ստորաբաժանման ղեկավարի) հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:
13.18. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ անգամ:
13.19. Խորհրդի նիստերը գումարվում և անցկացվում են հետևյալ կերպ՝
13.19.1. Խորհրդի նիստի քարտուղարը Խորհրդի նիստերի գումարման մասին պատշաճ տեղեկացնում է Խորհրդի բոլոր անդամներին և Ընկերության Գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին, ինչպես նաև Խորհրդի նիստ գումարելու պահանջ ներկայացրած անձանց՝ նշելով Խորհրդի նիստի գումարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը և Խորհրդի օրակարգը.
13.19.2. Խորհրդի նիստի քարտուղարը Խորհրդի նիստն սկսվելուց առնվազն 10 րոպե առաջ գրանցում է Խորհրդի նիստին ներկայացած Խորհրդի անդամներին և արդյունքների մասին հայտնում Խորհրդի նախագահին կամ նրա տեղակալին.
13.19.3. Խորհրդի նիստին քվորումն ապահոված լինելու և Ընկերության Գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի ներկայության դեպքում սահմանված ժամին Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, Խորհրդի նիստը հայտարարում է բացված.
13.19.4. Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, Խորհրդի նիստին ներկա Խորհրդի անդամներին, Ընկերության Գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին և մասնակցող անձանց ծանոթացնում է Խորհրդի օրակարգի ու դրանում ընդգրկված հարցերի քվեարկությունների ձևերի մասին.
13.19.5. Խորհրդի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի շուրջ Խորհրդի անդամները, Ընկերության Գործադիր տնօրենը կամ նրա պարտականությունները կատարող անձը ու մասնակցող անձինք արտահայտվելու իրավունք ունեն.
13.19.6. Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ քննարկումներն ավարտվելուց հետո Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հարցը դնում է քվեարկության.
13.19.7. Խորհրդի նիստի քարտուղարը հաշվառում է ձայները և դրանք տրամադրում կամ քվեարկության արդյունքները հայտնում է Խորհրդի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա

տեղակալին, որը հրապարակում է քվեարկության դրված հարցի շուրջ Խորհրդի կողմից կատարված քվեարկության արդյունքները.
13.19.8. Խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ կայացվելուց հետո Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում` նրա տեղակալը, Խորհրդի նիստին մասնակցած Խորհրդի անդամներին տեղեկացնում է Խորհրդի նիստի արձանագրությանը ծանոթանալու և ստորագրելու կարգին, որից հետո հայտարարում է Խորհրդի նիստը փակված.
13.19.9. Խորհրդի քվորումի, Ընկերության Գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի բացակայության դեպքում Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում` նրա տեղակալը կամ Խորհրդի կողմից լիազորված Խորհրդի անդամը հայտարարում է նոր Խորհրդի նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, և վայրը.
13.19.10. Գումարված Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ Խորհրդի նիստի բոլոր անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով` իրական ժամանակի ռեժիմում: Այդպիսի նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում.
13.19.11. Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստն անցկացնում է Ընկերության խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը (այսուհետ` նիստի նախագահող), երբ նիստի անցկացման տեղում ներկա են խորհրդի առնվազն երկու անդամներ: Իրական ժամանակի ռեժիմում Խորհրդի նիստը անցկացվում է նիստի անցկացման տեղում տեղադրված հեռախոսի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով (այսուհետ` կապի միջոց), որոնցով Խորհրդի նիստի անցկացման ժամանակ ապահովվում է խորհրդի նիստի բոլոր խորհրդի անդամների հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Խորհրդի նիստերն իրական ժամանակի ռեժիմում անցկացվում են հետևյալ կարգով` Նիստի նախագահողը կապի միջոցով կապ է հաստատում նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի նիստի մասնակցի հետ, վերջինիս առաջարկելով ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը: Խորհրդի նիստի քարտուղարը արձանագրում է արտահայտված դիրքորոշումը, որը ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստորագրության է ներկայացվում Խորհրդի նիստի անցկացման սենյակում չգտնվող դիրքորոշում հայտնած Խորհրդի անդամին: Ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստացված գրավոր դիրքորոշումը Խորհրդի անդամը ստորագրում և ֆաքսիմիլային կապի միջոցով հետ է ուղարկում Խորհրդի նիստի քարտուղարին: Միաժամանակ կապի միջոցով նիստի մասնակցի արտահայտած դիրքորոշումը ձայնագրվում կամ տեսագրվում և պահվում է` մինչև Խորհրդի նիստի արձանագրության ստորագրումը: Խորհրդի նիստի անցկացման տեղում չգտնվող Խորհրդի անդամի կապի միջոցով արտահայտված դիրքորոշումը հաշվի է առնվում քվեարկության և ձայների հաշվառման ժամանակ:
13.20. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը` իր, Խորհրդի անդամի, Ընկերության Գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, լիազոր մարմնի կամ Ընկերության բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի գրավոր պահանջով:
13.21. Կանոնադրության համաձայն Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով: Խորհրդի նիստերն հեռակա կարգով գումարման անցկացումը կատարվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով խորհրդի նիստ գումարելու և անցկացնելու դեպքում`
13.21.1. Խորհրդի նիստերի քարտուղարը Խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության միջոցով ուղարկում է Խորհրդի օրակարգը, քվեաթերթիկները` համապատասխան հարցով, քվեարկման տարբերակներով, տվյալ հարցի վերաբերյալ Ընկերության Գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի գրավոր դիրքորոշումը.
13.21.2. Խորհրդի անդամները` ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով Խորհրդի օրակարգին, մեկ բանկային օրվա ընթացքում քվեաթերթիկների միջոցով քվեարկում են դրանում նշված հարցի շուրջ ու ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով այն ուղարկում են Խորհրդի նիստի քարտուղարին.
13.21.3. Խորհրդի նիստի քարտուղարը ամփոփում է Խորհրդի անդամների կողմից կատարված քվեարկության արդյունքները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է Խորհրդի նիստի հեռակա կարգով անցկացման արձանագրություն.

13.21.4. հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի կազմված արձանագրությունը՝ խորհրդի նիստի քարտուղարը քվեաթերթիկների հետ միասին ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է Խորհրդի անդամներին՝ ստորագրության.
13.21.5. հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի ստորագրված արձանագրության հիման վրա Խորհրդի նիստի քարտուղարը կազմում է Խորհրդի համապատասխան որոշման նախագիծ և այն ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է Խորհրդի նախագահին՝ ստորագրության համար և այն ստորագրված վիճակում ստանալով՝ տրամադրում է Ընկերության Գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին՝ որոշման պահանջների կատարումն ապահովելու համար: Քվեաթերթիկները համարվում են վավեր, եթե քվեաթերթիկում թողնվել է մեկ տարբերակ և ուղարկվել է քվեաթերթիկում նշված ժամկետում:
13.22. Կանոնադրության 13.14 կետի գ), դ), թ) և ժբ) ենթակետերում նշված հարցերը, ինչպես նաև Ընկերության հեռանկարային զարգացման կամ գործարար ծրագրի հաստատման, Խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:
13.23. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին անձնական մասնակցությամբ կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են Խորհրդի անդամների կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ Կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
13.24. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Ընկերության Գործադիր տնօրենի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի պարտադիր մասնակցությամբ՝ բացառությամբ Ընկերության Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների վերաբերյալ հարցերի: Գործադիր տնօրենը Խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
13.25. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
բ) նիստին մասնակցած անձինք,
գ) նիստի օրակարգը,
դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի,
ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,
զ) նիստում ընդունված որոշումները:
13.26. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
13.27. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստում ընդունված որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
13.28. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Հանձնաժողովների իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են Խորհրդի որոշմամբ:
13.29. Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Ընկերության այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

13.30. Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նրան արգելվում է լինել ապահովագրական ընկերության ղեկավար,

գ) նա մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից,

դ) օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով նա զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,

ե) նա մահացել է:

13.31. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված վարձատրությունը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

13.32. Ընկերությունն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու 13.31.-րդ կետով նրան փոխհատուցված վարձատրությունը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

13.33. Ընկերությունն իրավական ակտերով սահմանված կարգով վարում է Խորհրդի անդամների ռեեստր, որը բաց է Ընկերության բաժնետերերի ծանոթացման համար: Խորհրդի անդամների ռեեստրը պետք է պարունակի Խորհրդի անդամների վերաբերյալ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկությունները:

13.34. Խորհրդի նախագահը կամ Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել Ընկերության Գործադիր տնօրեն կամ գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ ապահովագրական ընկերության Խորհրդի նախագահ կամ անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը և այլ ապահովագրական ընկերությունը հանդիսանում են մեկը մյուսի դուստր կամ մայր ընկերություն:

## 14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

14.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Ընկերության Գործադիր տնօրենը: Վարչությունը ունենում է անդամներ: Գործադիր տնօրենը և Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են Խորհրդի կողմից: Գործադիր տնօրենի տեղակալները Խորհրդի կողմից նշանակվում են Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

14.2. Ընկերության Գործադիր տնօրենը՝

ա) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, ինքնուրույն ստորաբաժանումների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,

բ) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) լուծում է աշխատանքային ներքին կանոնակարգերով իրեն վերապահված հարցերը,

դ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության կողմից առաջարկվող ապահովագրության պայմանները (կանոնները), Ընկերության կողմից կիրառվող ապահովագրական սակագների միջակայքերը (նվազագույն և առավելագույն չափերը),

դ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության տարեկան վերաապահովագրական քաղաքականության ծրագիրը, ինչպես նաև Ընկերության գործարար ծրագիրը և ծախսերի նախահաշիվը,

ե) Խորհրդի հավանությանն է ներկայացնում Ընկերության կողմից կնքվելիք վերապահովագրության գլխավոր պայմանագրերը (ֆակուլտատիվ կամ օբլիգատոր),
զ) իր իրավասության սահմաններում կազմավորում է մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,
է) Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան քննարկում է ապահովագրական գործունեության ծավալման հետ կապված խնդիրները,
ը) քննարկում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը,
թ) Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի շրջանակներում հաստատում է մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գործունեության եռամսյակային, տարեկան ծախսերի նախահաշիվներն ու դրանց կատարողականները,
ժ) հաստատում է Ընկերության ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային փաստաթղթերը՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք, համաձայն իրավական ակտերի և Կանոնադրության, ենթակա են հաստատման Ընկերության Խորհրդի կողմից,
ժա) ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
ժբ) հաստատում է ապահովագրական հատուցումները վճարելու կամ մերժելու վերաբերյալ եզրակացությունները,
ժգ) լուծում է օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր:
14.3. Ընկերության Գործադիր տնօրենը ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից իր իրավասությունների սահմաններում կնքում է գործարքներ, գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:
14.4. Ընկերության Գործադիր տնօրենը՝
ա) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կարգադրություններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
բ) Ընկերության աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր կամ լիազորում է դրանց մի մասի կնքումը Ընկերության այլ ղեկավարներին, ու Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի իմաստով հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ,
գ) լուծում է Ընկերության աշխատակիցների, բացառությամբ Ընկերության Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, հետ կնքված աշխատանքային պայմանագրերը, կամ լիազորում է դրանց մի մասի լուծումը Ընկերության այլ ղեկավարներին,
դ) Ընկերության Խորհրդի նշանակմանն է ներկայացնում Ընկերության գլխավոր հաշվապահի և Գործադիր տնօրենի տեղակալների թեկնածուներին,
ե) բանկերում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
զ) ստորագրում և իրավասու մարմիններին է ներկայացնում Ընկերության ֆինանսական, վիճակագրական, հարկային և այլ բնույթի հաշվետվություններ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր,
է) Ընկերության անունից կնքում է ապահովագրության պայմանագրեր (վկայագրեր) և դրանց հետ կապված այլ գործարքներ՝ հաշվի առնելով Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված սահմանափակումները և պայմանները,
ը) ստորագրում է Վարչության նիստերի արձանագրություններն ու որոշումները, կազմակերպում է Վարչության կողմից ընդունված որոշումների կատարումը.
թ) կազմակերպում է ապահովագրական հատուցումների գործընթացը,
ժ) Ընկերության Խորհրդի համաձայնությամբ նշանակում է Ընկերության մասնաճյուղերի կառավարիչներին, ներկայացուցչությունների, հիմնարկների ղեկավարներին, վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները,

ժա) Ընկերության աշխատակիցների, բացառությամբ Խորհրդի կողմից նշանակվող ղեկավարների, նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
ժբ) իր իրավասության սահմաններում կազմավորում է ժամանակավորապես գործող հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,
ժգ) Ընկերության Խորհրդի կողմից նշանակված ղեկավարներին ու այլ աշխատակիցներին ժամանակավորապես արգելում է կատարել իրենց աշխատանքային պարտականությունները՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով Խորհրդին,
ժդ) իրականացնում է Կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ: Ընկերության Գործադիր տնօրենը հաշվետու է Ընդհանուր ժողովին և Խորհրդին:
14.5. Այն հարցերը, որոնք Օրենքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Կանոնադրությամբ չեն սահմանվել որպես Ընդհանուր ժողովի, Խորհրդի, վարչության, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ պատասխանատու ակտուարի իրավասությանը պատկանող հարցեր, պատկանում են Ընկերության Գործադիր տնօրենի իրավասությանը:
14.6. Գործադիր տնօրենը Խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:
14.7. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին, ներքին աուդիտին, գլխավոր հաշվապահին, պատասխանատու ակտուարին կամ այլ անձի:
14.8. Խորհրդի կողմից Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝
ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով Օրենքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն նրան արգելվում է լինել ապահովագրական ընկերության Գործադիր տնօրեն կամ այլ ղեկավար,
գ) օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով նա զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
դ) նա մահացել է:
14.9. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձն Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Ընկերությունն իրավունք ունի Գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու Կանոնադրության սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:
14.10. Ընկերության Գործադիր տնօրենը, Գործադիր տնօրենի տեղակալը չեն կարող Ընկերությունում զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ ապահովագրական ընկերությունում լինել ղեկավար կամ այլ աշխատակից: Բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, Ընկերության Գործադիր տնօրենը, Գործադիր տնօրենի տեղակալը կարող են վճարովի այլ աշխատանք կատարել միայն Խորհրդի համաձայնությամբ:

## 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

15.1. Ընկերության գլխավոր հաշվապահը կամ նրա պարտականություններն իրականացնող անձը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
15.2. Գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

15.3. Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և Գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
15.4. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ Օրենքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, այլ իրավական ակտերին և Կանոնադրությանը համապատասխան: Սույն կետում նշված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար գլխավոր հաշվապահի պատասխանատվությունը չի տարածվում Ընկերության պատասխանատու ակտուարի կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման և հրապարակման վրա: Ընկերության այն հաշվետվությունները, որոնք պարունակում են տարբեր տեղեկատվություն, որի պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար պատասխանատու են գլխավոր հաշվապահն ու պատասխանատու ակտուարը, ստորագրվում են այդ երկու պաշտոնատար անձանց կողմից:
15.5. Ընկերության գլխավոր հաշվապահը չի կարող Ընկերությունում զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ ապահովագրական ընկերությունում լինել ղեկավար կամ այլ աշխատակից: Բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, Ընկերության գլխավոր հաշվապահը կարող է վճարովի այլ աշխատանք կատարել միայն Խորհրդի համաձայնությամբ:

## 16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

16.1. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Գործադիր տնօրենի, գործադիր մարմնի անդամների կամ գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
16.2. Ներքին աուդիտն իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ և Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Ներքին աուդիտի գործունեության կանոնակարգով» սահմանված խնդիրներ և գործառույթներ:
16.3. Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը կարող է ունենալ տեղակալ: Ներքին աուդիտի ղեկավարի տեղակալը նշանակվում է Խորհրդի կողմից՝ ներքին աուդիտի ղեկավարի ներկայացմամբ: Ներքին աուդիտի ղեկավարի տեղակալը պետք է համապատասխանի լիազոր մարմնի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին: Ներքին աուդիտի ղեկավարի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է ներքին աուդիտի ղեկավարի տեղակալը:
16.4. Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը և նրա տեղակալը չեն կարող Ընկերությունում զբաղեցնել այլ պաշտոն կամ այլ ապահովագրական ընկերությունում լինել ղեկավար կամ այլ աշխատակից: Բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը և նրա տեղակալը կարող են վճարովի այլ աշխատանք կատարել միայն Խորհրդի համաձայնությամբ:

## 17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԿՏՈՒԱՐԸ

17.1. Ընկերության պատասխանատու ակտուարին նշանակում է Խորհուրդը:
17.2. Ընկերության պատասխանատու ակտուարն իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոնադրությամբ սահմանված խնդիրներ և գործառույթներ:

## 18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

18.1. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Ընկերության արտաքին աուդիտին հաստատում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը: Յուրաքանչյուր տարի Ընկերությունում Արտաքին աուդիտի ընտրությունը կարող է կատարվել է հետևյալ երկու եղանակներով (ընդ որում յուրաքանչյուր տարի նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրությունը սահմանվում է Ընկերության բաժնետերերի Ժողովի որոշմամբ)՝

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում Ընկերության խորհրդի կողմից ներկայացրած կազմակերպությանը (անձին) ուղղակի հաստատելու միջոցով,

բ) Արտաքին աուդիտի ընտրության վերաբերյալ մրցույթի կազմակերպման և անցկացման միջոցով: Մրցույթի կարգը սահմանվում է Խորհրդի կողմից հաստատված Ընկերության արտաքին աուդիտի ընտրության համապատասխան կանոնակարգով: Մրցույթի արդյունքում Ընկերության արտաքին աուդիտի ընտրության համապատասխան կանոնակարգի համաձայն հաղթող ճանաչվող անձին Ընկերության Խորհուրդը ներկայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը: Ընկերության արտաքին աուդիտը պետք է համապատասխանի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված չափանիշներին: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Խորհուրդը:

18.2. Ընկերության աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել Խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:

18.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող մասնակիցների պահանջով: Այդ դեպքում աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են աուդիտ պահանջող մասնակիցները: Ընդ որում, սույն կետում նշված անձինք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատու-ցում, և Ընկերությունը պարտավոր է հատուցել դրանք, եթե այդ աուդիտն Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի որոշմամբ արդարացված է եղել Ընկերության համար:

18.4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսվի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Ընկերության ղեկավարությանը) կազմում:

18.5. Ընկերությունն աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև Ընկերության կողմից լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում, տեխնիկական պահուստների, հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին, տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին:

18.6. Աուդիտորական ստուգում իրականացնելու ընթացքում Ընկերության ֆինանսական վիճակի իր կարծիքով էական վատթարացման փաստեր, ինչպես նաև ներքին համակարգերի (այդ թվում՝ ներքին հսկողության համակարգի) թերություններ հայտնաբերելու դեպքում արտաքին աուդիտն իրականացնող անձը պարտավոր է դրանց մասին անհապաղ, բայց ոչ ավել քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահել լիազոր մարմնին:

18.7. Ընկերությունը պարտավոր է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում հրապարակել արտաքին աուդիտի կողմից կազմված աուդիտորական եզրակացությունը և տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

18.8. Ընկերության աուդիտն իրականացնող անձը եզրակացություն է ներկայացնում նաև՝

ա) Ընկերության տեխնիկական պահուստների համարժեքության մասին,
բ) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության մասին,
գ) Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,
դ) Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին,
ե) Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին,
զ) ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին:
18.9. Իրավական այլ ակտերով կարող են աուդիտն իրականացնող անձի համար սահմանվել աուդիտին և աուդիտորական եզրակացության ձևին և բովանդակությանը վերաբերող առավել մանրամասն պահանջներ:
18.10. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը կամ նրա կազմում ընդգրկված աուդիտորը չի կարող՝
ա) լինել Ընկերության կամ դրա առանձնացված ստորաբաժանման աշխատակից, ղեկավար կամ կառավարման այլ մարմիններում ընդգրկված անձ,
բ) լինել Ընկերության կամ Ընկերության ստորաբաժանումների կառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձի հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխան, քրոջ կամ եղբոր ամուսինը կամ երեխան կամ իրավական ակտերի համաձայն այլ փոխկապակցված անձ,
գ) հանդիսանալ Ընկերության բաժնետոմսերի, արժեթղթերի կամ այլ գույքի կամ գույքային իրավունքների սեփականատեր,
դ) կնքել այնպիսի գործարքներ Ընկերության հետ, որոնք կապված չեն իր՝ որպես Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի գործունեության հետ,
ե) կնքել այնպիսի գործարքներ Ընկերության հետ, որոնք կապված չեն իր՝ որպես Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի գործունեության հետ և որոնց համաձայն իրեն վճարվող գումարի չափը կախված է աուդիտի արդյունքներից:

## 19. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

19.1. Ընկերությունը իրավական ակտերով սահմանված կարգով և պարբերականությամբ, կազմում, հրապա-րակում լիազոր մարմին և պետական այլ մարմիններին է ներկայացնում տարեկան, եռամսյակային, ամսական, շաբաթական և օրական ֆինանսական, վիճակագրական և այլ բնույթի հաշվետվություններ:
19.2. Ընկերությունը պարտավոր է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում հրապարակել իր եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները: 1
19.3. Հաշվապահական հաշվառումն Ընկերությունում իրականացվում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան:
19.4. Ընկերության ֆինանսական (գործառնական) տարին սկսվում է տվյալ տարվա հունվարի 1-ին և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին:
19.5. Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

## 20. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

20.1. Ընկերության ղեկավարները իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

20.2. Ընկերության ղեկավարներն Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառված վնասի համար՝ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն: Եթե Ընկերությանը վնաս պատճառած արարքն իրականացրել են Ընկերության մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:
20.3. Անձն ազատվում է Ընկերության պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ այն համոզմունքով, որ իր գործողությունները ելնում են Ընկերության շահերից, մասնավորապես՝
ա) եթե ողջամիտ գործարար տրամաբանությունից ելնելով՝ կայացվել են որոշումներ, նույնիսկ եթե դրանք Ընկերությանը հետագայում հասցրել են այնպիսի վնասներ, որոնց առաջացումն այդ որոշումն ընդունելիս հստակորեն հաշվի է առնվել որպես բիզնես ռիսկ,
բ) եթե ղեկավարի կամ այլ աշխատակիցների կողմից սխալ կամ թերի որոշումների ընդունումը եղել է բարեխիղճ՝ առանց վնաս պատճառելուն հատկապես միտված, և եթե այդ որոշումների ընդունմամբ չեն խախտվել օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջները:
20.4. Ընկերության ղեկավարների պաշտոնից ազատվելը չի ազատում նրանց իրենց մեղքով Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից:

## 21. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

21.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ապահովագրական ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:
21.2. Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով: Ընկերությունը կարող է միանալ միայն ոչ կյանքի ապահովագրության դասերով ապահովագրություն իրականացնելու լիցենզիա ստացած ապահովագրական ընկերությանը:
21.3. Ընկերությունը մեկ այլ ապահովագրական ընկերության հետ միանալու դեպքում այդ ընկերության հետ կնքում է միացման պայմանագիր՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստանալով լիազոր մարմնի նախնական համաձայնությունը:
21.4. Միացման պայմանագրի կնքման համաձայնություն ստանալու համար Ընկերությունը իրավական ակտերով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում լիազոր մարմնին է ներկայացնում միացմանը նախնական համաձայնություն ստանալու մասին դիմումը՝ դրան կցելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված փաստաթղթեր և անհրաժեշտ տեղեկատվություն:
21.5. Ընկերությունը լուծարվում է՝
ա) Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում),
բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում,
գ) Ընկերության սնանկության դեպքում:
21.6. Ընկերության Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնել Ընկերության լուծարման մասին, եթե Ընկերությունը փոխանցել է իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ, Ընկերությունը կատարել է ապահովագրական պայմանագրերից բխող բոլոր պարտավորությունները և ունի բավարար միջոցներ բոլոր այլ պարտատերերի պահանջները բավարարելու համար:
21.7. Ընդհանուր ժողովի կողմից Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար լիազոր մարմնին դիմելու մասին որոշման կայացման համար Խորհուրդը Ընդհանուր ժողովին է ներկայացնում Ընկերության ընթացիկ տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցների առկայությունը հավաստող և պարտատերերի պահանջների բավարարման համար անհրաժեշտ ժամկետները նախատեսող տեղեկանք:
21.8. Ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության լուծարման նպատակով Ընդհանուր ժողովի կողմից նախնական համաձայնություն ստանալու համար լիազոր մարմնին դիմելու մասին որոշման հիման վրա

Ընկերությունը լիազոր մարմնին է ներկայացնում Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու դիմում՝ դրան կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը սահմանվում է լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով:

21.9. Լիազոր մարմնի կողմից Ընկերության լուծարմանը նախնական համաձայնություն տալու դեպքում Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում իր ապահովագրական պորտֆելը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ամբողջությամբ փոխանցելու և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու ուղղությամբ:

21.10. Ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելուց և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուց հետո միայն Ընդհանուր ժողովը կարող է Ընկերության լուծարման մասին որոշում ընդունել:

21.11. Լուծարման մասին որոշման ընդունումից հետո Ընկերությունը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմնին է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու դիմում՝ դրան կցելով օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ:

21.12. Լիազոր մարմնի կողմից Ընկերության լուծարման թույլտվությունից հետո հնգօրյա ժամկետում Ընկերությունում ստեղծվում է լուծարային հանձնաժողով:

21.13. Լուծարային հանձնաժողովը ստեղծվում է Ընկերությունը լուծարելու, Ընկերության գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով:

21.14. Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխան որակավորում ունեցող անձինք:

21.15. Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը:

21.16. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Ընկերության կառավարման լիազորությունները:

21.17. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից հնգօրյա ժամկետում լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և ծանուցում լիազոր մարմնին Ընկերության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին, որը չի կարող պակաս լինել 60 օրից:

21.18. Ընկերության կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել Ընկերության կնիքը, դրոշմակնիքները, կապարակնիքը, ձևաթղթերը, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:

21.19. Լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է լիազոր մարմին՝ Ընկերության ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը: Լիազոր մարմինը դիմումը ստանալու պահից եռօրյա ժամկետում Ընկերության ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:

21.20. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կանոնադրության 21.19 ենթակետով սահմանված կարգով Ընկերության ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո 15-օրյա ժամկետում փոխել Ընկերության կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:

21.21. Լուծարային հանձնաժողովը մինչև պարտատերերի պահանջների բավարարումը սկսելը՝

ա) հաշվեգրում և գնահատում է Ընկերության ակտիվներն ու պասիվները,

բ) ձեռնարկում է Ընկերության բոլոր պարտատերերին հայտնաբերելու և Ընկերության դեբիտորական պարտքերն ստանալու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ,

գ) միջոցներ է ձեռնարկում Ընկերության ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար,

դ) միջոցներ է ձեռնարկում Ընկերության նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ,

ե) որոշում է Ընկերության պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները մասնակիցների միջև բաշխելու կարգը:

21.22. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ 7-օրյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝

ա) լուծարվող Ընկերության գույքի կազմի մասին,

բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Ընկերության հաշվեկշռում արտացոլված կամ Ընկերությանը ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ սահմանված պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը,

գ) պարտատերերի ներկայացրած պահանջների քննարկման արդյունքների մասին,

դ) լազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

21.23. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել լիազոր մարմնին:

21.24. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կանոնադրությամբ սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

21.25. Ընկերության գրավով ապահովված պարտավորությունները բավարարվում են տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացումից ստացված գումարից՝ արտահերթ: Եթե պարտավորության արժեքը գերազանցում է տվյալ պարտավորության ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկայի իրացման արժեքը, ապա գրավով չապահովված պարտավորության մասը բավարարվում է այլ պարտատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունների հետ համատեղ:

21.26. Ընկերության պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ լուծարային հանձնաժողովի կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները,

բ) երկրորդ՝ Ընկերության կողմից կնքված ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները,

գ) երրորդ՝ առաջին և երկրորդ հերթերում չընդգրկված պահանջները՝ բացառությամբ Ընկերության մասնակիցների և Ընկերության հետ փոխկապակցված անձանց պահանջների, որոնց նկատմամբ Ընկերության պարտավորությունները բավարարվում են հինգերորդ հերթում,

դ) չորրորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ Ընկերության պարտավորությունները,

ե) հինգերորդ՝ Ընկերության բաժնետերերի և Ընկերության հետ փոխկապակցված անձանց պահանջները:

21.27. Պարտատերերի հանդեպ լուծարվող Ընկերության պարտավորությունները բավարարելուց հետո մնացած գույքը լուծարման հանձնաժողովը բաշխում է բաժնետերերի միջեւ հաջորդականությամբ՝

ա) առաջին հերթին կատարվում են վճարումներն այն բաժնետոմսերի դիմաց, որոնք ենթակա են բաժնետերերի պահանջով հետգնման՝ ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան.

բ) երկրորդ հերթին վճարվում են արտոնյալ բաժնետոմսերի համար հաշվարկված, բայց չվճարված շահութաբաժինները.

գ) երրորդ հերթին կատարվում են արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքի վճարումները.

դ) չորրորդ հերթին կատարվում է լուծարվող Ընկերության մնացած գույքի բաշխումը հասարակ (սովորական) եւ բոլոր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի միջեւ:

21.28. Ընկերության բոլոր տեսակի բաժնետոմսերի լուծարային արժեքը հավասար է դրանց անվանական արժեքին:
21.29. Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:
21.30. Լուծարային հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջները մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև Ընկերության լուծարային հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի բողոքարկելու լուծարային հանձնաժողովի գործողությունները:
21.31. Եթե պարտատերը պահանջ է ներկայացրել պարտատերերի պահանջների ներկայացման «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո, ապա նրա պահանջը բավարարվում է լուծարային այն միջոցների հաշվին, որոնք կմնան պարտատերերի ժամանակին ներկայացված պահանջների բավարարումից հետո:
21.32. Եթե պահանջ ներկայացրած և լուծարային հանձնաժողովի կողմից հաշվառված պարտատերը մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար լուծարային հանձնաժողովի կողմից առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հայտարարված ժամկետի վերջին օրը չի ներկայանում իր պահանջն ստանալու համար, ապա այդ պարտատիրոջը հատկացվելիք միջոցները կամ գույքն օրենքով սահմանված կարգով հանձնվում են նոտարի դեպոզիտ կամ տրամադրվում են ի պահ:
21.33. Յուրաքանչյուր հերթի պահանջի բավարարումն սկսելուց առաջ լուծարային հանձնաժողովը առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հայտնում է տվյալ հերթի պահանջների բավարարման վայրի, կարգի և ժամկետների մասին տեղեկություններ: Պահանջների բավարարման վայրին, կարգին և ժամկետներին վերաբերող հիմնական տեղեկությունները, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրավաբանական ուժ են ստանում առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլով հրապարակվելու հաջորդ օրվանից:
21.34. Կանոնադրության 21.26 կետի բ) ենթակետում ընդգրկված պահանջների բավարարման ժամկետը չի կարող 21 օրից պակաս լինել: Ընդ որում, պահանջների բավարարման սահմանված ժամկետը որևիցե հիմքով բաց թողնելու պատճառաբանությամբ ենթակա չէ վերականգնման:
21.35. Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են ներված:
21.36. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել լիազոր մարմնին:
21.37. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է լիազոր մարմնի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ առնվազն ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում:
21.38. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարային հաշվեկշիռը և Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից հաստատվելու պահից եռօրյա ժամկետում ներկայացնում է լիազոր մարմին:
21.39. Լիազոր մարմնի կողմից լուծարային հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է լիազոր մարմնի կողմից լուծարային հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը և լուծարային հաշվեկշիռը լուծարվող Ընկերության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում լիազոր մարմին:
21.40. Լիազոր մարմնի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում, լիազոր մարմինը Ընկերությանը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում ապահովագրական ընկերությունների գրանցումների մատյանում, որից հետո Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը դադարած:
21.41. Լիազոր մարմնի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում լուծարային հանձնաժողովը Ընկերության լուծարման վերաբերյալ լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով հրապարակում է տեղեկատվություն, որից

հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Ընկերության լուծարման հետ կապված պարտավորություններից:
21.42. Լուծարային հանձնաժողովի անդամի վարձատրությունը կատարվում է Ընկերության գույքի հաշվին:

## 22. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

22.1. Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը տեղի է ունենում բացառապես Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի՝ Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

## 23. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23.1. Կանոնադրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ հաստատված Կանոնադրությունը իրավաբանական ուժ են ձեռք բերում Կանոնադրության պետական գրանցման պահից, եթե օրենքով և իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:
23.2. Եթե Կանոնադրությունում ներառված դրույթները հակասում կամ չեն համապատասխանում առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին, ապա Ընկերության համար գործում են առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը: